



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2021 թվականի N 1152

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ ԷԼԻՋԱ ՆՎԵՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ՄԱՐԻՆԵ ՄԵԽԱԿԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էլիզա Նվերի Մարգարյանի և Մարինե Մեխակի Նահապետյանի կողմից ներկայացված իրազեկումը, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ս. Կարապետյանի 2021 թվականի մայիսի 26-ի թիվ 54/4-1141 գրությունը՝ հանրային հավաքի անցկացման վերաբերյալ դրական կարծիքով, ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 20-22-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

1. Էլիզա Նվերի Մարգարյանի և Մարինե Մեխակի Նահապետյանի կողմից 2021 թվականի հունիսի 12-ին՝ ժամը 15:00-ից 22:00-ն ընկած ժամանակահատվածում, Վանաձոր քաղաքի Հայքի հրապարակում հանրային հավաքի անցկացման վերաբերյալ իրազեկումն ընդունել ի գիտություն:
2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարի որոշման մասին անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև համապատասխան որոշումը փակցնել համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի և տեսանելի տեղում: Որոշումը տեղադրել նաև vanadzor.am համացանցային կայքէջում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Ճիշդ է՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ *Սեդրա Ա. Հովհաննիսյան* Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

